Series I Volume XI, No. 3 September 1985

ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ARMENIAN NUMISMATIC JOURNAL

ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ARMENIAN NUMISMATIC SOCIETY
8511 BEVERLY PARK PL., PICO RIVERA, CALIF. 90660, USA

ARMENIAN NUMISMATIC JOURNAL Ser. I, Vol. XI, No. 3 Sept. 1985

LETTERS

Ձեր նամակէն կ'իմանամ որ կը փափաքիք ինծմէ ունենալ դրամագիտա-
լուրջ ուսումնասիրութիւն մը, որ մաս կազմէ մեծանուն դրամագէտ՝ Զա-
րեհ Պտուկեանին ծօնուելիք հատորին: Հակառակ շատ մը անպատեհութիւն-
ներու կը խոստանամ ոչ մէկ ջանք խնայել որպէս զի կարենամ զէթ չնչին
յարգանքի տուրք մը մատուցանել մեր մեծ դրամագէտ՝ յոյժ թանկագին
Պտուկեանին:...

Ասպետ Տօնապետեան
Պէյրութ

Այս երկտողս կը գրեմ եւ կ'ուզեմ ծանօթանալ Ձեր անցին հետ,
որովհետեւ մինչեւ օրս առաջին անգամ է որ կը հանդիպիմ Ձեր անունին:
Մինչ Լիբանանի ամբողջ պատերազմի տեւողութեան ընթացքին աշխարհէն
կտրած ձեւով եւ յետոյ չորս տարիէ ի վեր քաղաքական եւ այլ պատճառ-
ներով տարիներէ ի վեր կը թափառիմ: Այժմ հաստատուած եմ Լա Եոլլա
գիւղաքաղաքը, Քալիֆորնիա նահանգին մէջ: Ձեր անունին հանդիպեցայ
առանձնատիպի մը մէջ: Այժմ կը խնդրեմ իմ հասցէին դրկէք երկտող նա-
մակ մը որպէսզի ծանօթանանք: Իմ անունս ալ լսած ըլլալու էք: Ես
1951-1953 թ. շրջաններուն եղած եմ Փարիզ, Սորպոն եւ ուսած եմ այդ-
տեղ: Մասնակցած եմ 1953 թ. միջազգային դրամագիտական համագումարին
եւ տուած եմ երկու հաղորդակցութիւններ հայկական դրամագիտութեան մա-
սին: Ունիմ հոս ու հոն ցանուցիր բաւական մեծ թիւով ուսումնասիրու-
թիւններ եւն.: Ձեր հրատարակութիւնը անձնական հրատարակութիւն մըն է
եւ ի՞նչ են պայմանները բաժանորդագրութեան: Եթէ ունիք ցանկը հրա-
տարակութեան կը խնդրեմ իմ հասցէին առաքէք: Քանի՞ թիւ հրատարակած
էք եւ ի՞նչ են հրատարակութեան ժամկէտները, տարեգիրք է՞, ամսագիր,
պարբերաթերթ, եւն., մանրամասն գրեցէք: Կանխաւ շնորհակալութեամբ,

Ձերդ՝

Պերճ Մ. Կարապետեան
Լա Եոլլա

Հաճոյքով յօդուած մը պիտի գրեմ Պր. Պտուկեանին համար: Հա-
ւանաբար Ռուբինեան իշխաններուն դրամներուն վերաբերեալ պիտի ըլլայ:
Շուտով պիտի ստանաք <u>Revue des Études Arméniennes</u>-ի մէջ հրատարակ-
ւած գրախօսութիւնս՝ Յուշամատեան ի յիշատակ Հ. Կղեմէս Վրդ. Սիպիլեանի
Ձեր գրքին մասին:...

Ձերդ՝

Ժիրայր Տէտէեան
Մոնփելիէ, Ֆրանսա

ARMENIAN NUMISMATIC JOURNAL is the quarterly publication of Armenian Numismatic Society, an educational, non-profit organization. Editor, Y. T. Nercessian, 8511 Beverly Park Place, Pico Rivera, California 90660, U.S.A. Associate Editors, W. Gewenian, T. Nercessian, Corresponding Editor, Henry Sarkissian (Yerevan). Non-Member subscription $6.00 per year. Single copies $2.00.

EXCERPTS FROM THE LETTERS RECEIVED ON PUBLICATION OF THE ARMENIAN NUMISMATIC BIBLIOGRAPHY AND LITERATURE

I received the package of books today for which I thank you. I spent most of the evening looking over your new book and I like it....

I noticed a few insignificant items missed in the Bibliography, but on the whole, the more I reuse it, the better I like it. You have clearly avoided the temptation to editorialize on the references, which is proper in my opinion. The indexes are well prepared. Two items mentioning coinage of Tigranes which are not listed are:

1. Herant Armen, Tigranes the Great, Detroit, Avondale Press, 1940.
2. Poole, Grueber, and Hill's article on "Numismatics" in the 11th ed. of the Encyclopedia Britannica.

Maxoudian has an article on the Armenians in Cyprus in The Armenian Review, 1974 issue, No. 108 that talks about coins of Cilician Armenia.

Hrand Pasdermadjian's Histoire de l'Arménie has a short sentence on Cilician coins but a few pages on economic aspects of the Cilician dynasty. I suspect you passed this one on purpose, since it says virtually nothing about coins....

Levon A. Saryan
Greenfield, WI

Congratulations! Your Armenian Numismatic Bibliography and Literature is a definitive work which will remain a standard reference work for a long time. It will encourage the study of Armenian numismatics throughout the world. Bravo. It is a work well done.

Paul Z. Bedoukian
Wilton, CT

I want to express my personal appreciation to you and the Armenian Numismatic Society for the great effort in assembling references, writing and publishing the Armenian Numismatic Bibliography and Literature. Good work! I have gone through some pains to find out what has been in print and to obtain some of the material on Armenian numismatics. My effort has been piece meal. This work has been a great aid to me. Thanks.

George Derderian
Arlington, VA

This Armenian Numismatic Bibliography and Literature is recommended to every scholar of Armenian history, fine arts, libraries, and institutions... They will become collector's items, when sold out....

Luther Eskijian
Altadena, CA

Ձեր գիրքը առաջին անգամ ամփոփուած մի հատորի մէջ ներկայացնում է այն բոլորը ինչ կատարուած է հայկական դրամագիտութեան ասպարէզում: Այն կը դառնայ դրամագէտի, պատմաբանի անբաժան ուղեկիցը, օգտակար լինելով ինչպէս սկզբնակ ուսումնասիրողին, այնպէս էլ հմուտ գիտնականին: Հատորը ինչպէս ափի վրայ բացայայտում է այն ինչ արուած է, միաժամանակ ստիպում խորհել այն մասին թէ ինչ պէտք է արուի (որը գուցէ աւելի կարեւոր է): Իսկ անելիքը շատ եւ շատ է: Ինչեւիցէ դուք մեծ գործ էք կատարել եւ ես յուսով եմ, որ հետագայում կը շարունակէք Ձեր գործը եւ տարիներ յետոյ կը պատրաստէք նրա երկրորդ հատորը:...

Հենրի Սարգսեան
Երեւան

Արդարեւ ստեղծել էք գովելի մի գործ, որի կարիքը մեծ է դրամագէտների եւ ոչ միայն դրամագէտների համար: Ինչպէս նուիրական ջանքերի արգասիք է Ձեր այդ գիրքը եւ բերկրալից, որ օտար լեզուներից բացի, դրանց զուգահեռ ներկայացուած են տուեալներ հայերէն լեզուով: Գրքի շարուածքը, թուղթը եւ ձեւաւորումը, բովանդակութիւնը ներդաշնակ ու տպաւորիչ են: Վաղ միջնադարից չէ, որ հարկ էր առել դրամագիտական միտքը Հայաստանի վերաբերեալ, սակայն ըստ Ձեր հրատարակութեան երեք ու կէս հարիւրամեակի տեւողութեան ուրուագծւում է ուշ միջնադարից մինչեւ մեր օրերը հասնող հայ դրամագիտական զարգացման ընթացքը: Անշուշտ այդ զարգացումը դիտւում է տարբեր ելեւէջներով՝ ներդաշնակուած հնագիտութեան ու արուեստի, պատմագիտութեան եւ ընդհանրապէս անցեալն ուսումնասիրող գիտութիւնների հետ:

Վիկտոր Լանգլուան, Կղեմէս Սիպիլեանը, Էռնեստ Բաբելոնը, Կարապետ Բասմաջեանը եւ արդարեւ զատէն մեր մտերիմ Զարեհ Պտուկեանը եղան ու մնացին այն լուսաւոր գործիչները, որոնք խթանեցին հայ դրամագիտութեան զարգացումը, որի հաստատութիւնները այնքան յստակօրէն արտացոլւում է Ձեր գրքով: Առանց վարանելու գնահատում եմ այն իբրեւ երեւոյթ հայ դրամագիտութեան ասպարեզում իր տեսակի մէջ: Այլ առթիւ դեռ շատերը պիտի արտայայտուեն ուրախութեամբ՝ ընդգծելով իրենց երախտագիտութիւնը Ձեզ՝ այն ջանքերի համար, որ նուիրեցիք յիշեալ գործի ստեղծման նպատակով: Առաւել մանրամասն կ՚ամփոփեմ խոհերս այդ առթիւ առանձին կարգով:...

Խ. Ա. Մուշեղեան
Երեւան

Սրբրս ստացանք եւ սիրով Հայաստանի խոշորագոյն գրադարաններին յանձնեցինք Ձեր Հայ դրամագիտական մատենագրութիւն եւ գրականութիւն մենագրութեան 15 օրինակները: Գրքի առաջին էջերից եւեթ մեզ յանում է գիտական բարեխիղճ ու քրտնաջան աշխատանքով ստեղծուած հիանալի մենագրութիւնը: Հարուստ նիւթերով ու բովանդակութեամբ այն իր ուրոյն տեղը կը գրաւի դրամագիտութեան մէջ:

Հր. Բաբայեան

ՍՓԻՒՌՔ, Բաժնի Վարիչ
Երեւան

Ստացել ենք մի օրինակ Ձեր Հայ դրամագիտական մատենագրութիւն եւ գրականութիւն գրքից: Հաճեցէք ընդունել մեր շնորհաւորանքներն ու ջերմ շնորհակալութիւնը: Այդ հատորից մեր գրադարանին երեք օրինակ եւս անհրաժեշտ է: Մեզ շատ պարտաւորուած կը զգայինք, եթէ հնարաւորութեան դէպքում բաւարարէիք մեր խնդրանքը: Ի դէպ ասենք, որ 1983 թ. սկսած չենք ստացել Հայ Դրամագիտական Հանդէսի եւ Բիւլետինի ոչ մի համար: Խնդրում ենք կարելիութեան սահմաններում դրանք էլ ուղարկէք: ...

Աւետիք Օհանեան
Տնօրէնի տեղակալ, Միասնիկեան գրադարան, Երեւան

BOOK REVIEW

ARMENIAN NUMISMATIC BIBLIOGRAPHY AND LITERATURE, by Y. T. Nercessian. Los Angeles: Armenian Numismatic Society, Special Publication, No. 3, 1984, 729 pp.

In the course of their history, the Armenians have had a number of opportunities to issue a national coinage. In ancient times, Tigranes the Great (95-56 B.C.) and other Artaxiad and Orontid monarchs issued a large series. The princes and kings of Cilician Armenia (A.D. 1080-1375) minted large number of coins, in three metals and inscribed in Armenian characters, that reflect the important commercial and political role this kingdom played during the Crusades. In modern times, Armenia is represented by the paper currency issues of the independent Republic of Armenia (1918-1920) and the Socialist Soviet Republic of Armenia (1921-1923). There are collectors and researchers actively accumulating and studying material from each of these three periods.

The broader view of Armenian numismatics includes not only these issues, but also coins that were minted in Armenia by foreign dynasties and those that circulated in Armenia but were produced elsewhere. Roman coins with Armenian references and the coins of Byzantine emperors of Armenian descent (of whom over twenty have been identified) are popular collecting areas. Also, many varieties of medallions commemorating Armenian culture and history have been issued, especially in recent years. Tokens and provincial paper money issues are also an area of intense collector activity.

Literature pertaining to Armenian coins, medals, and paper notes has appeared in a dozen different languages and is scattered in virtually hundreds of different publications. The pressing need to collect these sources and make them available to as many collectors and students as possible has been addressed in a recently published book, Armenian Numismatic Bibliography and Literature, written by California numismatist Yeghia T. Nercessian. The book was published in late 1984 by the Los Angeles-based Armenian Numismatic Society.

Every area of interest to Armenian numismatics is covered in this volume. Each entry is classified by its subject matter under headings that include many of the important categories of Near Eastern coinage. Cited publications range from standard reference works to short newspaper articles.

The magnitude and the depth of study of Nercessian's standard setting bibliographic compilation are best illustrated by giving chapter heading and the number of publications cited in each case.

Periodicals (sources consulted) 181

General References

Bibliography Sources 95
Numismatics—Education and Teaching 57
Numismatics in Allied Fields 31
History 95
Hoards 54
Collections Acquired by the State Museum of Armenian History. 46
Sale and Auction Catalogues 23
Miscellaneous 42

General Numismatics and Works Covering Multiple Periods 16

The Period of Ancient Numismatics
Sixth Century B.C. to Fourth Century A.D.

General Works 54
Satraps 50
Orontids 10
Artaxiads 129
Roman Coins and Medallions Relating to Armenia 81
Armeno-Iranian 14

The Period of Medieval Numismatics
Fifth to Eighteenth Century

General Works 12
Kiurke 13
Cilician Armenia 150
Armenian Rulers in the Byzantine Empire 11
Islamic Coins Struck in the Cities of Historic Armenia 135

The Republic of Armenia and the Surrounding Years (1918-1924) 29
Tokens 7
Seals 26
Medals 105
Reviews 64

A chronology of Armenian dynasties and a list of Artaxiad and Roupenian coin inscriptions are provided. Thorough subject and author indices enable the reader to quickly refer to literature on a particular topic or by a particular writer.

As in any bibliography, the pertinent publication data (title, author, pages, dates, etc.) for all books and articles is provided. The most useful feature, however, is the summary or abstract of the contents and principal conclusions of each cited publication enabling the reader to judge at a glance the relevance of the work to the topic of interest. The abstracts make interesting reading and can be studied in short snatches without

loss of continuity. In a sense, this book may be regarded as a chronicle of the progress of Armenian numismatic study.

Each entry is written in both English and Armenian languages. This feature will make the book appeal to the widest possible audience both in the United States and abroad. Readers fluent only in English can take full advantage of numismatic literature that might otherwise be inaccessible.

Nercessian has made a valiant effort to cite every published book and article, up to 1980, relevant to Armenian coinage. No important sources appear to have been missed, and many which have hitherto escaped notice are included. The Soviet Armenian literature has been thoroughly covered with the assistance of two numismatic scholars at State Museum of Armenian History in Yerevan, Khatchadour Mousheghian and Henry Sarkissian.

Collectors and researchers interested in the coinage of Armenia and the Near East will find this book to be an indispensable reference work that will also make interesting numismatic reading.

Y. T. Nercessian is well-qualified to prepare this work. An engineer by profession, Nercessian is secretary of the Armenian Numismatic Society and has edited the Society's organ, Armenian Numismatic journal, for ten years. He is thoroughly familiar with all areas of Armenian numismatics and has written extensively on coins and paper money. The Bibliography is the culmination of over a decade of research and effort.

In all, Armenian Numismatic Bibliography and Literature contains 1349 citations on 659 pages with an additional 70 pages of supplementary appendices. The volume is handsomely clothbound and may be purchased from the Armenian Numismatic Society, 8511 Beverly Park Place, Pico Rivera, California 90660, U. S. A. for $50.00.

Levon A. Saryan, Ph. D.
Greenfield, Wisconsin

Reviews on the above title have appeared in the following:

Coin World, Vol. XXV (21 November 1984), No. 1284, p. 60; Vol. XXVI (6 March 1985), No. 1299, p. 73.

Asbarez, Vol. LXXVII (2 February 1985), No. 7469, p. 15; Armenian Observer, Vol. XV (6 February 1985), No. 10, p. 2; Nor Gyank, Vol. VII (7 February 1985), No. 7, p. 13; Armenian Weekly, Vol. LIII (26 January 1985), No. 4 (2651), p. 12; all by Paul Z. Bedoukian.

AN OTTOMAN BANK NOTE WITH AN ARMENIAN INSCRIPTION

(Plate III) J. Guevrekian

A few years ago the writer received a photo copy of an Ottoman note from a European dealer. (See reproduction, Plate III.)

Sten (1) lists notes of "Banque Imperiale Ottomane" (BIO) since 1863 but without denominations or descriptions.

Pick (2) lists issues of BIO under Abdul Aziz but does not list notes of one Lira.

Erol (3) is one of the most detailed catalogues ever published on the Ottoman bank notes. However, a similar note is not listed.

Denomination: 1 Lira
Size: 12½cm. x 18 cm., 4 7/8". x 7 1/8"
Color: Light blue background
Reverse: Unknown
Obverse: Denominations in four corner; in Armenian (upper left hand corner), Turkish, French, and Greek
Signatures: Left, E. Brauvais; right, Edward Vincent
Printer: Unknown
Issue Date: December 1873 under Abdul Aziz (4)

Armenian Inscription, in circular pattern:

ՎՃԱՐԵԼԻ ՅՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ . Դ Կ. ՊՕԼԻՍ

Vjareli hōsmanian kaiserakan bankan . d K. Bōlis
(Payable to Ottoman Imperial Bank. in Constantinople)

Center:

1 *ՕՍՄԱՆԵԱՆ ՈՍԿԻ*

1 ōsmanian oski
(1 Ottoman Lira)

It would be interesting to know why Ottoman notes were issued with Armenian and Greek inscriptions.

---

1. George J. Sten, <u>Ecyclopedia of World Paper Money</u> (Port Washington, New York, 1965).
2. Albert Pick, <u>Standard Catalog of World Paper Money</u>, 3rd ed., 1980.
3. Mine Erol, <u>Kagit Para</u> (Ankara, 1970), in Turkish.
4. Inscription date, courtesy of Kenneth M. MacKenzie, Tenafly, New Jersey, private correspondence.



GUEVREKIAN, AN OTTOMAN BANK NOTE WITH AN ARMENIAN INSCRIPTION

BEDOUKIAN, Paul Z. Artashēsian harstut'ian dramnerě [Coinage of the Artaxiads of Armenia] - Արտաշէսեան հարստութեան դրամները, գրեց՝ Զարեհ Պուլկեան. Vienna: Mekhitarist Press, 1983, 52 pp. text in Armenian, 36 pp. catalogue in English, 8 pls.

See the last abstract on p. 45, Armenian N. J., Vol. V (1979).

MONCREIFFE, Iain. Royal Highness; Ancestry of the Royal Child, by Sir Iain Mocreiffe. London: Hamish Hamilton, 1982, pp. 48-52, illus.

Mention is made that the kings of new Armenia, as forefathers of British Royal Highness, accepted the nominal suzerainty of the sultans of Konia. Hetoum I (1226-1271) struck bilingual trams with the sultan's name in Arabic script on one side; on the other side are his own figure on horseback and his name in Armenian lettering. YTN

Յիշուած է թէ Նոր Հայաստանի թագաւորները, իբրեւ նախահայրերը Բրիտանիոյ գահաժառանգին, ընդունեցին Քոնիայի սուլթաններուն անուանական գերիշխանութիւնը: Հեթում Ա (1226-1271) կոխեց երկլեզուեան դրամներ, ուր մի կողմին վրայ սուլթանի անունը արձանագրուած է արաբերէն տառերով եւ միւս կողմին վրայ՝ իր ձիավար նկարը եւ անունը հայերէն գրերով: ԵԹՆ

BOUTIN, S. Collection N. K.: Monnaies des empires de Byzance, de Nicee — de Trebizonde — des royaumes Vandales, Ostrogoths, Lombards, de Chypre — des Croses — Imitations de monnaies romaines et byzantines per les différents peuples barbares, notamment par les France — Monnaies de l'Arménie Artaxiate et de l'Arménie Cilicienne, par S. Boutin. Wetteren, Belgium: A. G. van der Dussen b.v., 1983, pp. 2-24, Nos. 208-250, pls. XI-XIII; 27-48, Nos. 281-477, 481-484, pls. XIV-XXIV; 50-51, Nos. 496-497, pl. XXV; 54-55, Nos. 519-524, pl. XXVI; 58-69, Nos. 545-575, 582-597, pls. XXVII-XXX; 124-25, Nos. 896-897, 902-904, pl. XLVIII; 154-157, Nos. 1103-1129, pls. LVIII-LX; 162-173, Nos. 1150-1432, pls. LXI-LXXIII. In French.

The coins of the following emperors and corulers of Armenian descent of the Byzantine Empire are catalogued: Maurice Tiberius (582-602), Constantina and Theodosius; Heraclius (608-641), Martina, Heraclius Constantine, and Heraclonas; Constans II (641-668) and Constantine IV, Heraclius and Tiberius; Constantine IV (668-685), Heraclius, and Tiberius; Justinian II (685-695); Tiberius III Apsimarus (698-705); Philippicus Bardanes (711-713); Artavasdus and Nicephorus (742-743); Leo V and Constanttine (813-820); Michael III, Theophilus, Theodora, Thecla, Basil I, Constantine VII, and Leo VI; Leo VI and Alexander (886-912); Alexander (912-913), Constantine VII, Romanus I, Christopher, Romanus II, Stephen, Zoe; John I Zimisces (969-976); Basil II and Constantine VIII (976-1025); Constantine VIII (1025-1028). The Latin legends of the coins of the following kings and queen of Cyprus indicate that they have used the title of "King of Jerusalem, Cyprus, and Armenia [Cilician]:" Janus (1398-1432), James II (1460-1473), and Catherine Cornaro (1475-1489).

Nadia Kapamadji also has been able to assemble the coins attributed to the following Armenian rulers: Artaxiad Tigranes II the Great (95-55 B.C.), tetradracms from the mint of Antioch, a drachm and a chalcus from uncertain mints, a drachm and chalcii from the Artaxata mint where the reverses display the Tyche of Antioch, Victory, Heracles, Nike, and the Tyche of Damascus; Artavasdes II (56-34 B.C.), a drachm having a quadriga on the reverse; Prince T'oros I (1102-1129), coppers; kings, Levon I (1187-1219), double trams, half double trams, coronation trams with one and two lions, a gold coin with two lions, trams, half trams, crusader type billon with Latin legend, and tanks; Hetoum I (1226-1269), Hetoum-Kaiqobād and Hetoum-Kaikhusrew bilingual trams and half trams, Hetoum-Zabel trams and half trams, a tank, equestrian kardez, and king seated type kardezzes; Levon II (1270-1289), trams, half trams with and without legend; Hetoum II (1289-1306), billons, kardez with king's head, and kardezzes with king seated design; Smpad (1296-1298), coronation tram, trams, a half tram, and poghs; Gosdantin I (1298-1299), trams and kardezzes. Levon III (1301-1307), takvorins; Oshin (1308-1320), coronation trams, takvorins, and pogh; Levon IV (1320-1342), takvorins, takvorins overstruck in Arabic, large pogh, and poghs; Guy (1342-1344), takvorin; Gosdantin III (1344-1363), takvorins struck in Tarsus and Sis; Levon the Usurper (1363-1365), takvorins; Gosdantin IV (1365-1373), takvorins and poghs; Levon V (1374-1375), billons and poghs. The legends, monograms, field marks, and metrological data are published. YTN

Նկարագրուած են Բիւզանդական հետեւեալ հայազգի կայսրերուն եւ զահակիցներուն դրամները.- Մօրիկ Տիբերիոս (582-602), Կոստանդինա եւ Թէոդորոս. Հերակլ (608-641), Մարտինա, Հերակլիոս, Կոստանդին եւ Հերակլէոնաս. Կոստաս Բ (641-668) եւ Կոստանդին Դ, Հերակլ եւ Տիբերիոս. Կոստանդին Դ (668-685), Հերակլ եւ Տիբերիոս. Յուստինիանոս Բ (685-695). Տիբերիոս Գ Ապսիմարոս (698-705). Փիլիպ Վարդան (711-713). Արտաւազդ եւ Նիկեփոր (742-743). Լեւոն Ե եւ Կոստանդին (813-820). Միքայէլ Գ, Թէոփիլոս, Թէոդորա, Թեկլա, Վասիլ Ա, Կոստանդին Է եւ Լեւոն Զ. Լեւոն Զ եւ Աղեքսանդր (886-912). Աղեքսանդր (912-913), Կոստանդին Է, Ռոմանոս Բ, Ստեփան, Զօէ. Յովհաննէս Ա Չմշկիկ (969-976). Վասիլ Բ եւ Կոստանդին Ը (976-1025). Կոստանդին Ը (1025-1028): Կիպրոսի հետեւեալ թագաւորներու եւ թագուհիի դրամներուն խորագրութիւնները կը յայտնեն, թէ անոնք գործածեցին ``թագաւոր Երուսաղէմի, Կիպրոսի եւ Հայաստանի [Կիլիկեան]`` տիտղոսները.- Յանոս 1398-1432 , Յակոբ Բ (1460-1473) եւ Կատարինէ Կոռնարոյ (1475-1489): Նուարդ Գափամաճեան կրցած է նաեւ համախմբել հետեւեալ հայ զահակալներուն վերագրուած դրամները.- Արտաշէսեան Տիգրան Բ (95-55 Ն.Ք.), չորեքդրամեաններ Անտիոքի փողերանոցէն, դրախմ մը եւ քաղկոս մը անորոշ փողերանոցներէն, դրախմ մը եւ քաղկոսներ Արտաշատի փողերանոցէն ուր բեկողմերուն վրայ պատկերուած են Անտիոքի Բախտը, Յաղթանակ, Վահագն, այլ Յաղթանակը եւ Դամասկոսի Բախտը. Արտաւազդ Բ (56-34 Ն.Ք.), դրախմ մը որուն ետին պատկերուած է քառաձի մարտակառք մը. իշխան Թորոս Ա (1102-1129), պղինձներ. թագաւորներ՝ Լեւոն Ա (1187-1219), երկդրամներ, կէս երկդրամներ, մի եւ երկու առիւծով օծման դրամներ, կրկնառիւծ ոսկիէ դրամ մը, դրամներ, կէս դրամներ, լատինատառ խաչակիրի տիպով բիլլոն մը եւ դանգեր. Հեթում Ա (1226-1269), Հեթում-Քայքոպատի եւ Հեթում-Քայխուսրովի դրամներ եւ կէս դրամներ, Հեթում-Զապէլի տիպով դրամներ եւ կէս դրամներ, դանգ մը, ձիաւոր քարտէզ մը եւ թագաւորը նստած

տեսակ քարտէզներ. Լեւոն Բ (1270-1289), դրամներ, կէս դրամներ խո-
րագրով եւ առանց խորագրի. Հեթում Բ (1289-1306), քիլոններ, թագա-
ւորի գլուխով քարտէզ եւ թագաւորը նստած տեսակ պատկերատիպով քարտէզ-
ներ. Սմբատ (1296-1298), օծման դրամ, դրամներ, կէս դրամ եւ փողեր.
Կոստանդին Ա (1298-1299), դրամներ եւ քարտէզներ. Լեւոն Գ (1301-
1307), թագուորիններ. Օշին (1308-1320), օծման դրամներ, դրամներ,
թագուորիններ եւ փող. Լեւոն Դ (1320-1342), թագուորիններ, արաբերէն
տառերով կրկնադրոշմուած թագուորիններ, խոշոր փող եւ փողեր. Կի
(1342-1344), թագուորին. Կոստանդին Գ (1344-1363), թագուորիններ
կոխուած Տարսոն եւ Սիս. Լեւոն Բռնակալ (1363-1365), թագուորիններ.
Կոստանդին Դ (1365-1373), թագուորիններ եւ փողեր: Հրատարակուած
են խորագրութիւնները, մենագրերը, դաշտի նշանները եւ չափագիտական
տուեալները:
ԵԹՆ

HAYRENIKY DZAYN. Hobelyanakan hushamedal /Anniversary Medal/ - Յոբելյանական հուշամեդալ. <u>Hayreniky Dzayn</u>, Vol. XX (25 January 1984), No. 4 (964), p. 6. In Armenian.
On Aram Khachaturian's 80th birthday anniversary, a medal was issued. On the medal is the portrait of Kachaturian's face. His name, a lyre, and the numerals "80" are engraved on the reverse.
Արամ Խաչատրեանի ծննդեան 80-ամեակին առթիւ թողարկուած է յուշա-
մեդալ: Մեդալի վրայ Խաչատրեանի դիմաքանդակն է: Մեդալի հակառակ երե-
սին դրոշմուած է իր անունը, քնար մը եւ ``80`` թուանշանը:
ԵԹՆ

NOR GYANK. Haykakan oski dramner /Armenian Gold Coins/ - Հայկական ոսկի դրամներ. <u>Nor Gyank</u>, Vol. V (10, 17 November, 1, 15 December 1983), Nos. 46, 47, 49, 51, pp. 7, 38, 4, 31, respectively; Vol. VI (29 December 1983, 10, 26 January, 9, 23 February, 8, 22 March, 5 April 1984), Nos. 1, 3, 5, 7, 9, 11, 13, 15, pp. 69, 33, 33, 33, 4, 33, 33, 39, respectively; illus. In Armenian.
Armenian gold medals were prepared by Zaven Keledjian for commercial purposes. On the medals the busts of Arsames I (weight, 16 gm.), Tigranes II (8, 16, and 32 gm.), Artavasdes II (8 and 16 gm.) and Mesrop Mashtots' (15 gm.) are portrayed. The design of each king's medal is based on his ancient coin. On the reverse of Mesrop's medal, the Armenian alphabet he invented is engraved. The legends are engraved in Armenian and English.
YTN
Վաճառքի համար ոսկիէ մեդալներ պատրաստուած են Զաւէն Գըլըճեանի
կողմէ: Անոնց վրայ պատկերուած են կիսանդրիները Արշամ Ա-ի (քաշ` 16
գրամ), Տիգրան Բ-ի (8, 16 եւ 32 գրամ), Արտաւազդ Բ-ի (8 եւ 16
գրամ) եւ Մեսրոպ Մաշտոցի (15 գրամ): Իւրաքանչիւր արքայի մեդալին պատ-
կերագրութիւնը հիմնուած է իր հնատիպ դրամին վրայ: Մեսրոպի մեդալին
ետեւը դրոշմուած են իր հնարած հայ տառերը: Շրջագրութիւնները դրոշ-
մըուած են հայերէնով եւ անգլերէնով:
ԵԹՆ

ASHJIAN, Mesrob. <u>Pontifical Visit</u> - <u>Հայրապետական շնորհաբեր այցելու-թիւն</u>, by Bishop Mesrob Ashjian. New York: Armenian Apostolic Church of America, 1983, /p. 11/. In English and Armenian.
While describing the glory of the fortress of Sis, mention is made that according to the gold coin of King Gosdantin II, "the true king and the keeper of the kingdom is the fort of Sis."
YTN
Սիսի բերդին փառքին նկարագրութեան առթիւ, յիշուած է թէ ըստ Կոս-
տանդին Բ թագաւորի ոսկեդրամի արձանագրութեան` ``Սսոյ բերդն է թա-
գաւոր``:

COINAGE OF THE ARMENIAN KINGDOMS OF SOPHENE AND COMMAGENE, by Paul Z. Bedoukian, Los Angeles: Armenian Numismatic Society, *Special Publication,* No. 4, G Printing, 37 pp., 2 pls. Text in English and Armenian, Catalogue and plates in English. Card covers. ISBN O-9606842-3-9. $6.00 Plus shipping.

Bedoukian not only classifies the coins of Sophene as a separate chapter in Armenian numismatics, but also includes the coins of Commagene in this booklet.

Based on the excavations and inscriptions of Nemrud Dagh and historical evidence, the author concludes that the language and population of Commagene was Armenian just like Sophene and Armenia Major.

The author points out that up to now it was not possible to correctly attribute the coinage of Sophene from the fifth century to the first century B.C. because of the paucity of the specimens. Bedoukian's methododlogy, the number of variants under study, and the detailed classification elevates the coinage of this dynasty to the ranks of Armenian Artaxiads and Roupenians.

In this paper the revelation is the coinage of Commagene. Here the coins issued by the kings of Commagene are being considered Armenian.

This booklet is a must for all individuals and libraries who are interested in the history of ancient Armenia and Near Eastern Civilizations.

ARMENIAN NUMISMATIC SOCIETY
8511 Beverly Park Place
Pico Rivera, California 90660, U.S.A.

Please send me __________ copies of the book entitled **Coinage of the Armenian Kingdom of Sophene and Commagene,** by Paul Z. Bedoukian, $6.00 each. Enclosed is a check for $__________ (cost of the book plus postage and handling, per copy $1.00 U.S.A., $1.25 elsewhere). California residents add 6.5% sales tax. Foreign remittance may be made by international postal money order, or a draft drawn on a branch of a U. S. bank.

NAME ____

ADDRESS ____

______________________________________ ZIP __________